ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2005

«ՀՀ պետական պարտքի 2005թ. տարեկան հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Լ. Հովականյանը, Գ. Վարդապետյանը, Ս. Իսրայելյանը:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք
ՊՊ-պետական պարտատոմսեր
ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ՄԺՊ-միջին ժամկետայնության պարտատոմսեր
ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

ՀՀ ներքին պետական պարտքը ձևավորվել է պետական պարտատոմսերի թողարկմամբ: Պետական պարտատոմսերի առաջին թողարկումը տեղի է ունեցել 1995թ. սեպտեմբեր ամսին: Մինչև 2000թ. թողարկվել են միայն կարճաժամկետ պետական պարտատոմսեր, որով պայմանավորված էլ պարտքի ժամկետայնությունը եղել է շատ կարճ, եկամտաբերությունը՝ բարձր: 2000թ. մարտ ամսին առաջին անգամ թողարկվեցին միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր: Ներքին պետական պարտքի կառավարման ռազմավարության շրջանակներում պարտքի ժամկետայնության երկարաձգման և էժանացման նպատակով 2004թ. սեպտեմբերից թողարկվեցին միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսեր և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր:

Անցած 10 տարիների ընթացքում ներքին պետական պարտքի ծավալները, ժամկետայնությունն ու եկամտաբերությունը դրսևորել են հետևյալ միտումները (տես գծ.1).

Գծապատկեր 1

ՆՊՊ-ի ծավալները և ժամկետայնությունը 1995-2005 թթ.



	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Շրջանառ. ծավալ անվ. արժեքով (մլն դրամ)	210	10220	23169	29231	31179	29795	36427	40813	43132	46406	51347
Եկամտ (%)	37.88	47.3	53.83	46.64	52.48	23.42	20.05	16.43	13.72	9.01	7.31

Ներքին պետական պարտքի կառավարման արդյունավետության մասին են վկայում նաև սպասարկման ծախսերի տարեցտարի նվազումը և ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորության մեծացումը (տես աղ. 1):

Աղյուսակ 1

ՆՊՊ-ի գծով կատարված գործառնությունները 1995-2005թթ.

մլն. դրամ

	Պետական պարտատոմսերի տեղաբաշխում	Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթ	Պարտատոմսերի մարում	ՆՊՊ-ի սպասարկում	Դեֆիցիտի ֆինանսավորում
1995թ.	750.7	717.6	516.7	24.0	200.9
1996թ.	19,438.6	17,299.9	8,836.5	592.3	8,463.4
1997թ.	41,360.0	32,998.1	23,886.6	4,524.3	9,111.5
1998թ.	36,567.8	29,728.2	31,636.7	9,329.8	-1,908.6
1999թ.	57,561.9	47,757.6	46,801.4	10,801.6	956.2
2000 թ.	44,847.2	40,744.4	38,962.4	9,353.9	1,782.0
2001 թ.	45,914.6	41,890.4	35,935.7	6,541.5	5,954.7
2002 թ.	41883.8	38,202.8	34,255.5	5,955.3	3,947.3
2003 թ.	43,300.0	40,267.0	37,963.7	5,587.3	2,303.3
2004 թ.	43,900.0	44,018.2	38,435.5	5,408.2	5,582.7
2005 թ.	46,800.0	45,701.6	39,333.4	5,066.4	6,368.1

Գծապատկեր 2

ՆՊՊ-ի գործիքակազմը 1995-2005 թթ.

մլն. դրամ



2005 թվական

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- Ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 51,347.5 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսերը՝ 6,500.0 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 36,487.5 մլն. դրամ և երկարաժամկետ պարտատոմսերը՝ 8,360.0 մլն. դրամ:
- Պետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 6,368.1 մլն. դրամ:
- Միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.31%:
- ՊՊ-ների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1100 օր (ՊԿՊ-եր՝190 օր, ՄԺՊ-եր՝ 721 օր և ԵՊ-եր՝ 3465 օր):

Աղյուսակ 2

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ն բնութագրող ցուցանիշներ

	առ 31.12.2004թ	առ 31.12.2005թ
Ներքին պետական պարտքը (ՆՊՊ, մլն.դրամ) որից՝	**46,406.1**	**51,347.49**
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	9,200.0	6,500.00
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն.դրամ)	34,506.1	36,487.49
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	2,700.0	8,360.00
ՆՊՊ ժամկետայնությունը (օր) որից՝	**753**	**1100**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (օր)	128	190
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (օր)	726	721
երկարաժամկետ պարտատոմսերի համար (օր)	2981	3465
ՆՊՊ եկամտաբերությունը (%) որից՝	**9.0067**	**7.3085**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (%)	5.6375	3.8002
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (%)	9.8856	7.7077
երկարաժամկետ պարտատոմսերի համար (%)	9.2551	8.2936
ՆՊՊ / ՀՆԱ (%)	**2.45**	**2.30**

Գծապատկեր 3

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետայնության



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2005թ. պետական բյուջեով պետական պարտատոմսերի հաշվին նախատեսվում էր բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 6.0 մլրդ. դրամով և վճարել 7.3 մլրդ. դրամ սպասարկման ծախս:

2005թ-ի ընթացքում տեղի է ունեցել 47 թողարկում, որից 29-ը՝ ՊԿՊ, 14-ը՝ ՄԺՊ, 4-ը ԵՊ թողարկումներ են: Թողարկվել է 46.8 մլրդ. դրամ ծավալով պարտատոմս: Պահանջարկը կազմել է 107.3 մլրդ. դրամ, հետևաբար, պետական պարտատոմսերի թողարկման ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 2.29 անգամ: Տեղաբաշխվել է 45.1 մլրդ. դրամ: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալի մեջ ՊԿՊ-երը կազմել են 22.0 մլրդ. դրամ (48.8%-ը), ՄԺՊ-երը՝ 17.4 մլրդ. դրամ (38.6 %-ը), իսկ ԵՊ-ները 5.7 մլրդ. դրամ (12.6%-ը): Տարվա ընթացքում կատարված ՊԿՊ մեկ թողարկման ծավալը միջինը կազմել է մոտ 776 մլն. դրամ, ՄԺՊ-ն՝ 1,307.0 մլն. դրամ, ԵՊ-ն՝ 1,500.0մլն. դրամ: 2005թ-ի ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պարբերաբար իրականացրել է պարտատոմսերի հետգնում՝ 5,559.8 մլն. դրամ ընդհանուր ծավալով: Հիմնականում հետ են գնվել միջին ժամկետայնությամբ մասնակի մարումներով պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը զգալիորեն բարձր էր շրջանառող պարտքի միջին կշռված եկամտաբերությունից: Հետգնումների նպատակն էր բարելավել ՆՊՊ-ն բնութագրող ցուցանիշները:

2005թ.-ի ընթացքում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1007 օր, տեղաբաշխման եկամտաբերությունները տատանվել են 3.1000%-10.0000%-ի սահմաններում, իսկ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 5.1044%: (տես աղ. 3):

Աղյուսակ 3

2005թ.ընթացքում ՊՊ-երի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	3.5000	5.9800	5.3206	457
Փետրվար	3.9800	5.9888	4.7097	670
Մարտ	3.5000	7.0000	4.7784	1037
Ապրիլ	3.4000	5.8000	4.5754	492
Մայիս	4.4486	6.9900	5.3347	599
Հունիս	4.5120	8.2400	6.0999	1452
Հուլիս	3.7000	5.6600	4.8741	656
Օգոստոս	3.1000	5.1888	4.4749	776
Սեպտեմբեր	3.4890	8.0000	5.7803	2357
Հոկտեմբեր	3.5366	5.4900	4.3961	912
Նոյեմբեր	3.3296	5.2304	4.6382	771
Դեկտեմբեր	7.6600	10.0000	8.8226	5479
Ընդամենը	**3.1000**	**10.0000**	**5.1044**	**1007**

Աղյուսակ 4

2005թ. ընթացքում ՊՊ-երի հետ կատարված գործառնություններն ըստ եռամսյակների

մլն. դրամ

	Թող.	Տեղ.	Հասույթ	Մարում	Սպասարկ.	Դեֆ.ֆին.
I	13,800.0	13,800.0	13,856.9	6,452.4	991.0	7,404.5
II	15,800.0	14,411.5	14,497.4	7,885.4	1,405.1	6,612.0
III	10,200.0	10,200.0	10,491.3	10,444.4	1,376.4	46.9
IV	7,000.0	6,660.0	6,855.8	14,551.1	1,293.9	(7,695.3)
Ընդամենը	**46,800.0**	**45,071.5.0**	**45,701.5**	**39,333.4**	**5,066.4**	**6,368.1**

2005թ. պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը գերազանցել է ՊՊ-ի տեղաբաշխման անվանական ծավալը (տես աղ. 4): Պատճառն այն է, որ տարվա ընթացքում ՊՊ եկամտաբերությունը շարունակաբար նվազել է և թողարկված բոլոր ՄԺՊ-երն ու ԵՊ-երը տեղաբաշխվել են հավելավճարով (պարտատոմսերն իրացվել են անվանական արժեքից բարձր գնով):

2005թ. ընթացքում պետական պարտատոմսերի հաշվին պետբյուջեի դեֆիցիտն օրենքով նախատեսվածից ավել է ֆինանսավորվել 368.1 մլն. դրամով և կազմել 6,368.1 մլն. դրամ, իսկ սպասարկման ծախսերը տնտեսվել են 2,233.6 մլն դրամով՝ կազմելով 5,066.4 մլն. դրամ: Սպասարկման ծախսերի տնտեսման պատճառը պարտատոմսերի նախատեսված հետգնումների համեմատ փաստացի փոքր ծավալներն են, ինչպես նաև ՊՊ-երի տեղաբաշխման եկամտաբերության անկումն ու մարման բեռի ցրվածության մեծացումն են մինչև 2020թ-ը:

Գծապատկեր 4

ՆՊՊ-ի եկամտաբերության և ժամկետայնության շարժը 2005թ.



Գծապատկեր 4-ից պարզորոշ երևում է, որ 2005թ-ի ընթացքում ներքին պետական պարտքի կառավարման բնագավառում հաջողվել է լուծել միաժամանակ երկու խնդիր՝ պարտքի ժամկետայնության երկարաձգում և եկամտաբերության իջեցում: Շնորհիվ երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման զգալիորեն բարելավվել է ներքին պետական պարտքի որակը, մարումների բաշխվածությունը կազմել է տասնհինգ տարի՝ մինչև 2020թ-ը: Տարվա ընթացքում նկատելի է միջին ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի շարունակական աճ, որը կարելի է բացատրել նաև տարվա ընթացքում բանկային համակարգում գրեթե միշտ առկա բարձր ավելցուկային իրացվելիությամբ, Ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից պարբերաբար իրականացվող հետգնումներով (տես գծ. 5):

Գծապատկեր 5

Բանկային համակարգում առկա ավելցուկային իրացվելիության և ՊՊ-երի

պահանջարկ/թողարկում կապը 2005թ-ին (երկշաբաթյակներով)



Ինչ վերաբերվում է ՊՊ-երի նկատմամբ ձևավորված պահանջարկին, ապա դրա 97.3 %-ը (104.3 մլրդ. դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, իսկ 2.1%-ը (2.2 մլրդ. դրամ)՝ նրանց ներդրողների հաշվին: 2005թ-ին պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերի 54.3%-ը բաժին է ընկնում 6 գործակալներին, 44.2%-ը՝ 14 դիլերներին, 1.5%-ը՝ գանձապետական պահառու համակարգին: Պետական պարտատոմսերի սեփականատերերի կառուցվածքում տարվա վերջի դրությամբ գերակշռում են ՀՀ բանկերը՝ 81% տեսակարար կշռով: Ոչ ռեզիդենտների մոտ գտնվող պարտատոմսերի ծավալը կազմում է 0.13 մլն. դրամ, որն ընդհանուր ծավալում զրոյական կշիռ է կազմում (տես գծ. 6):

Գծապատկեր 6

ՊՊ-երի սեփականատերերի կառուցվածքը (2005թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ)



ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2005թ.-ի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել են 981 գործարքներ, որից 961-ը եղել են միջբանկային, իսկ 20-ը ԿԲ-կողմից կատարված գործարքներ են
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 77,200.9 մլն. դրամ,

որից՝

  - Առևտրային բանկերի կողմից 75,913.4 մլն. դրամ
  - ԿԲ-ի կողմից 1,287.5 մլն. դրամ
- Ըստ պարտքային գործիքների տեսակի երկրորդային շուկայում շրջանառել են.
  - ՊԿՊ՝ 18,826.6 մլն. դրամ
  - ՄԺՊ՝ 42,741.9 մլն. դրամ
  - ԵՊ՝ 15,632.4 մլն. դրամ
- Կատարված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 5.4325%
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 1466օր
- Միջին օրական ծավալը՝ 303.9 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 4:

Գծապատկեր 7

2005թ. երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	6 և ավել տարի
գործ.ծավալ(հազ. դր)	6,452.5	6,875.2	5,637.3	18,031.2	7,468.6	15,816.2	15,632.6
եկամտ. (%)	3.27	3.85	3.81	5.29	5.16	5.63	7.78

2004թ-ի համեմատ երկրորդային շուկայում ՊՊ-երի շրջանառության ծավալները բավականին աճել են (65%-ով)՝ ի հաշիվ ՄԺՊ-ների և ԵՊ-ների շրջանառության ծավալների (նախորդ տարվա համեմատ ՄԺՊ-ների շրջանառության ծավալը ավելացել է մոտ 2 անգամ, ԵՊ-ների շրջանառության ծավալը՝ 8 անգամ):

Գծապատկեր 8

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը հետևյալն է.



Գծապատկեր 9

2005թ. երկրորդային շուկայում կատարած գործարքներն ըստ ամիսների



	Jan-05	Feb-05	Mar-05	Apr-05	May-05	Jun-05	Jul-05	Aug-05	Sep-05	Oct-05	Nov-05	Dec-05
գործ. ծավալ (մլն.դրամ)	3,344.	3,910	6,491	9,063	6,621	7,016	7,827	5,600	8,125	5,049	4,097	10,05
միջ. կշռ.եկամտ.(%)	4.518	5.525	4.909	5.044	4.882	5.683	5.553	5.403	6.085	4.844	5.178	6.368

Աղյուսակ 5

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի ծավալներն ու եկամտաբերությունները 2000-2005թթ.

	գործարքների ընդհանուր ծավալ (մլն. դրամ)	միջին եկամտաբերություն (%)	կատարված գործարքների քանակը	միջին օրական ծավալը (մլն. դրամ)	միջին օրական քանակը
2000թ.[1]	73,930.9	24,69	2469	289.4	9
2001թ.	53,906.6	19,78	1489	211.4	6
2002թ.	43,288.7	15,07	1013	171.1	4
2003թ.	48,881.6	12,71	1229	194.8	5
2004թ.	45,716.1	6.64	734	180.7	3
2005թ.	77,200.9	5.43	1466	303.9	4

[1] Ճշգրտված

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ՊԿՊ–երի 29 թողարկումներից 27-ին,
- ներդրման ծավալը կազմել է 682.3 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 23.5 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 7.3 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդին մասնակցել է 3 ներդրող,
- մարվել է 390.6 մլն. դրամի պարտատոմս,
- դիլեր բանկեր է փոխանցվել 14,5 մլն. դրամի պարտատոմս,
- ընդամենը շրջանառության մեջ է եղել 471.6 մլն. դրամի պարտատոմս,
- բացված դեպո հաշիվների քանակը կազմել է 681,
- գործող դեպո հաշիվների քանակը կազմել է 22,
- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 215 օր,
- միջինը մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 18 մլն. դրամ,
- միջինը մեկ ներդրողը մասնակցել է 1.3 թողարկման:

Ներդրման ծավալը 2004թ-ի նկատմամբ աճել է 209.1%-ով, իսկ ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 142.7%-ով (տես գծ. 9):

Գծապատկեր 9

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2005թ

մլն. դրամ



Չնայած նրան, որ 2005թ. ընթացքում Գանձապետական պահառուն մասնակցել է կազմակերպված պետական կարճաժամկետ պարտատոմսերի ոչ բոլոր թողարկումներին, այնուամենայնիվ ներդրման ծավալը զգալիորեն աճել է, որն էլ հանգեցրել է շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալի աճին:

Աղյուսակ 6

Գանձապետական պահառուի կատարած գործառնությունները
(ըստ եռամսյակների)

2005թ.	Տեղաբաշխում (մլն. դրամ)	Մարում (մլն. դրամ)	Միջին եկամտաբերություն (%)
I եռ.	83.8	100.1	4.1
II եռ.	138.1	97.2	4.6
III եռ.	216.6	50.5	3.8
IV եռ.	243.8	142.8	3.8
Ընդամենը	682.3	390.6	

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպո հաշիվների քանակը կազմել է 681, որը 8-ով կամ 1.2 %-ով ավելին է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գծ. 10):

Գծապատկեր 10

Դեպո հաշիվների դինամիկան 2005թ.



Դեպո հաշիվների քանակի ավելացումը ընդամենը 8-ով և միաժամանակ գործող դեպո հաշիվների քանակի նվազումը պայմանավորված է պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների նվազմամբ և միևնույն ժամանակ առևտրային բանկերում ավանդների տոկոսադրույքների բարձր մակարդակի պահպանմամբ: Համեմատության համար նշենք, որ 2004թ. պետական կարճաժամկետ պարտատոմսերի թողարկումների միջին կշռված եկամտաբերությունների միջինը կազմել է 5.2%, իսկ 2005թ. այն կազմել է 4.1%:

Գծապատկեր 11

Ներդրումներն ըստ ժամկետայնության 2005թ.



	1-13 շաբաթ	14-26 շաբաթ	27-39 շաբաթ	40-52 շաբաթ	Ընդամենը
Թողարկման ծավալի 10 % (մլն.դրամ)	100.0	900.0	650.0	600.0	2,250.0
Տեղաբաշխում (մլն.դրամ)	8.4	237.5	108.2	328.2	682.3
Տեղաբաշխվածի կշիռը (%)	8.4	26.4	16.6	54.7	30.3

2005թ. թողարկված պետական կարճաժամկետ պարտատոմսերից ներդրողները գերադասել են առավել երկարաժամկետ՝ 40-52 շաբաթ մարման ժամկետ ունեցող պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման կշիռը ամենամեծն է եղել և կազմել է 54.7% (տես գծ. 11): Սակայն, ինչպես երևում է գծապատկերից, ներդրողների կողմից ձեռք է բերվել Գանձապետական պահառուի կողմից առաջարկված ծավալի միայն 30.3%-ը, ինչը նշանակում է, որ նոր ներդրողները հնարավորություն ունեն մուտք գործելու պետական պարտատոմսերի շուկա՝ Գանձապետական պահառուի միջոցով:

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշների շարունակական բարելավման միտումը պահպանվել է նաև 2005 թվականին[1] :

2005 թվականին զգալիորեն նվազել է արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

Գծապատկեր 13

ՀՀ արտաքին պետական պարտքի և արտաքին պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշի դինամիկան



Ցուցանիշի կտրուկ նվազումը արդյունք է ոչ միայն ՀՆԱ-ի աճի և արտաքին պետական_պարտքի նվազման, այլ նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեզրման:

Արտաքին պարտք ձևավորող փոխառու միջոցների արժութային կազմը, ինչպես նաև դրանց փոխարժեքների վարքագիծը էական է այդ պարտքի սպասարկման ռիսկայնության գնահատման և կառավարման տեսանկյունից: ՀՀ արտաքին պետական պարտքը 1999թ. ի վեր աճել է հիմնականում արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերի հաշվին, որոնք տրամադրված են եղել SDR-ով և EUR-ով, իսկ ԱՄՆ դոլարով վարկերը հիմնականում առևտրային պայմաններով են տրամադրված եղել և վերջիններիս մասնաբաժինը մարումների արդյունքում նվազել է: 2001 թվականից ի վեր Հայաստանի արտաքին պետական պարտքը կազմված է չորս արժույթներով՝ USD, SDR, EUR և JPY, տրամադրված վարկերից:

Գծապատկեր 14

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի

[1] ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող որոշ ցուցանիշների գծով տվյալները տես հավելված 1-ում



Քանի որ SDR-ով տրամադրված վարկերի սպասարկումը իրականացվում է ԱՄՆ դոլարով, 2005 թվականին SDR-ի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրման[1] միտումը (ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեզրմանը պայմաններում) ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման առումով նպաստավոր էր:

Հաշվի առնելով, որ 2005 թվականին Հայաստանի Հանրապետության և Միջազգային Համագործակցության Ճապոնական Բանկի միջև ստորագրվել է 15.9 մլրդ իեն գումարի չափով վարկային համաձայնագիր, ակնկալվում է, որ մոտ ապագայում ճապոնական իենի մասնաբաժինը ՀՀ արտաքին պետական պարտքի կազմում զգալիորեն կմեծանա:

2005թ. ընթացքում ստորագրվել են 7 նոր վարկային համաձայնագրեր՝

- Գերմանիայի հետ 1 վարկային համաձայնագիր (**3.5 մլն EUR** գումարով),
- Ճապոնիայի հետ 1 վարկային համաձայնագիր (**15.9 մլրդ JPY** գումարով),
- Զարգացման Միջազգային Ընկերակցության հետ 3 վարկային համաձայնագրեր (3**6.3 մլն SDR** ընդհանուր գումարով),
- Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (**10.45 մլն SDR** գումարով),
- Միջազգային Զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (**5 մլն ԱՄՆ դոլար** գումարով)[2]:

2005 թվականի ընթացքում առևտրային պայմաններով տրամադրված վարկերի գծով նոր մասհանումներ չեն կատարվել, մարվել է 13 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ արտոնյալ վարկերը 2005թ. վերջին կազմել են 98%:

Գծապատկեր 15

ՀՀ արտաքին պետական պարտքի արտոնյալության դինամիկան

---

[1] 31.12.2004թ. դրությամբ 1SDR=1.55301USD,
31.12.2005թ. դրությամբ 1SDR=1.42927USD

[2] 31.12.2005թ. դրությամբ գործող արտաքին պետական վարկային համաձայնագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տես հավելված 2-ում



2005 թվականի վերջի դրությամբ առկա պարտքի շուրջ 94.5%-ի համար տոկոսավճարը հաշվարկվում է 0.75% դրույքաչափով, 3.5%-ի համար՝ 1.75-2.5% դրույքաչափով և ընդամենը 2%-ի համար դրույքաչափը լողացող է՝ Libor և CQB:

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 1099.2 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները կազմել են 922.8 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 84%), իսկ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 176.4 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 16%):

2004թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ հանրապետության արտաքին պետական պարտքի ծավալը նվազել է 7.1%-ով կամ 83.7 մլն ԱՄՆ դոլարով, որը ամբողջությամբ պայմանավորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ[3]:

Գծապատկեր 16

ՀՀ արտաքին պետական պարտքի մեծության փոփոխության և նրա վրա ազդող գործոնները

[3] 31.12.2004թ. դրությամբ 1SDR=1.55301USD, 1EUR= 1.3621USD
31.12.2005թ. դրությամբ 1SDR=1.42927USD, 1EUR= 1.1797 USD



2005 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

Աղյուսակ 7

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2005թ. ընթացքում

մլն ԱՄՆ դոլար

	Ստացում	*Սպասարկում*		
		ընդամենը	*այդ թվում*	
			մարում	*տոկոսավճար*
Ընդամենը	**59.258**	**61.819**	**49.967**	**11.852**
այդ թվում՝				
1. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**49.751**	**26.599**	**15.756**	**10.843**
որից՝				
Բազմակողմ վարկեր	**36.211**	**21.562**	**14.019**	**7.543**
Համաշխարհային Բանկ	33.982	10.025	3.613	6.412
որից՝				
Միջազգային Զարգացման Գործակալություն	33.982	9.073	2.965	6.108
Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	2.229	0.440	0.131	0.309
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	8.716	7.940	0.777
Եվրամիության	-	2.381	2.336	0.045
Երկկողմ վարկեր	**13.540**	**5.037**	**1.737**	**3.300**
Ռուսաստանի Դաշնություն	-	1.864	0.009	1.855
ԱՄՆ	-	2.587	1.728	0.859
Գերմանիա (KfW)	13.488	0.541	-	0.541

Ֆրանսիա	-	0.033	-	0.033
Ճապոնիա	0.052	0.012	-	0.012
2. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**9.507**	**35.220**	**34.211**	**1.009**
որից՝				
Բազմակողմ վարկեր	**9.507**	**35.220**	**34.211**	**1.009**
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	**9.507**	**35.220**	**34.211**	**1.009**

ՀՀ արտաքին պետական պարտքի մարման առումով 2005 թվականը հատկանշական էր նրանով, որ լրացավ Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի կողմից տրամադրված առաջին վարկի արտոնյալ ժամանակաշրջանը և ըստ վարկային համաձայնագրի ժամանակացույցի կատարվեց համապատասխան մարում, որով և սկիզբ դրվեց վերջինիս կողմից տրամադրված վարկերի մարումներին, ինչպես նաև ամբողջովին վաղաժամկետ մարվեց Եվրամիության կողմից տրամադրված վարկը:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 2002 թվականի հուլիսի 17-ին ստորագրված համաձայնագրի ժամկետների երկարաձգման հետևանքով պարտքի սպասարկման հետ կապված տարաձայնությունները 2005 թվականին վերջնականապես կարգավորվեցին՝ ռուսական կողմը տվել է հավաստում առ այն, որ Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված պետական վարկերը ամբողջությամբ մարվել են և վճարման ենթակա գումարներ չկան:

Ներկայումս փոփոխվել է նաև երկկողմ համաձայնագրերի հիման վրա ստացված արտաքին վարկային միջոցների ներգրավման պայմանները: 2005 թվականին վերջիններս ամբողջապես արտոնյալ պայմաններով են:

Գծապատկեր 17

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ